

---

---

ԹԱՆԳԱՐԱՆ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆ  
(Հայոց և հրեաների փորձառության համեմատական  
վերլուծություն)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

*Հայերն ու հրեաները առնվազն երկու հազարամյակ միմյանց լավ ճանաչում են շնորհիվ ոչ միայն իրենց պատմական հայրենիքներում և զանազան երկրներում հիմնված գաղութների տարածքներում ունեցած փոխադարձ շփումների, այլև ի հետևանս մասնագիտական նույն ոլորտներում իրականացվող գործունեության: Շատ դեպքերում նրանք ընկալվում են իբրև պատմական համանման ճակատագիր ունեցող ժողովուրդներ<sup>1</sup> և այդ հանգամանքը ու, հատկապես, XX դարում հայոց և հրեաների նկատմամբ տեղ գտած ցեղասպանությունների իրողությունը, թույլ է տալիս որակել նրանց իբրև «հարևաններ<sup>2</sup> հիշողության մեջ»:*

*Այս «հարևանությունն» ունի տարբեր դրսևորումներ: Դրանցում առանձնանում է Հայոց ցեղասպանության (1915–1923) ու հրեաների Հոլոքոստի<sup>3</sup> (1933–1945) հիշողության կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրության խնդիրը<sup>4</sup>: Այն ունի բազմաթիվ կողմեր, որոնց հետազոտումը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել հայերի*

---

<sup>1</sup> Հմմտ. R. Perroomian. Literary Responses to Catastrophe: A Comparison of the Armenian and the Jewish Experience. Atlanta, 1993.

<sup>2</sup> Վերջին ժամանակների քաղաքական զարգացումների հենքին «հարևանությունը» երբեմն ձեռք է բերում «մրցակցության» բնույթ:

<sup>3</sup> Հոդվածում նախապատվությունը տրվում է «հրեաների Հոլոքոստ» եզրույթի օգտագործմանը, քանի որ XIX դարի վերջին – XX դարի սկզբին հայերի կոտորածները և Եդեսիայի բնութագրող արտասահմանցի հեղինակներն օգտագործում էին «Հայկական հոլոքոստ» ձևակերպումը (տե՛ս, օրինակ, Another Armenian Holocaust. – “The New York Times”, 10. IX. 1895, <http://query.nytimes.com/mem/archive-free/pdf?res=9D05E5DD113DE433A25753C1A96F9C94649ED7CF>; C. Shattuck. Three Days of Butchery; A Woman Describes the Massacre of Armenians in Ourfa. Not Less than 3.500 were Killed. Terrible Slaughter in a Church. – “The New York Times”, 17. II. 1896; D. Z. Ferriman. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909. London, 1913; W. Churchill. The World Crisis, vol. 5, Aftermath 1918–1928. New York, 1929, p. 157.

<sup>4</sup> Հարցի շուրջ տե՛ս, մասնավորապես, Հ. Մարտիրոսյան. Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները. – ՊԲՀ, 2011, -2, էջ 24–46:

ու հրեաների հիշողության հարցերում ուժեղ և թույլ, մշակված կամ դեռևս դրա կարիքն ունեցող հարցերը, անդրադառնալ ինքնության բազմապիսի այլ դրսևորումների:

2013 թ. դրությամբ աշխարհում գործում է հրեաների Հոլոքոստին նվիրված 60–67 թանգարան և ցուցադրություն<sup>5</sup>, մինչդեռ Հայոց ցեղասպանության պարագայում նման հաստատությունների թիվը չի անցնում 4–5-ից<sup>6</sup>: Ինչու: Հարցը չունի պարզ ու միանշանակ պատասխան<sup>7</sup> և դրա որոնումներում, թերևս, պետք է անդրադառնալ, թե ի՞նչ իրո-

<sup>5</sup> Խոսքը վերաբերում է ամենատարբեր կարգավիճակ (մասնավորից մինչև պետական) ունեցող թանգարաններին: Կան մի շարք վեբկայքեր, ինչպես և հաշվարկներ աշխարհում առկա հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարանների, հուշարձանների ու հուշահամալիրների մասին: Հոդվածում որպես հիմք ընդունվել է հետևյալ ցուցակը՝ Holocaust Museums, Monuments, and Memorials around the World. Updated – January 2013. <http://www.state.nj.us/education/holocaust/resources/world.pdf>, որտեղ ներկայացված է 111 անուն թանգարան, հուշարձան ու հուշահամալիր: Փորձ է արվել հատ-հատ ճշտել, թե տվյալ ցուցակից քանիսն են թանգարան կամ պարունակում են Հոլոքոստին նվիրված ցուցադրություն: Դրանք, մեր հաշվարկով, թվով 58-ն են, որոնց ավելացվել են այլ ցուցակներից գտած ու ակնհայտորեն թանգարանային գործառույթներ իրականացնող և կամ Հոլոքոստին նվիրված ցուցադրություն ունեցող ևս 9 միավոր: Ըստ վերոնշյալ ցուցակի, առկա է հրեաների Հոլոքոստին նվիրված ընդամենը 25 հուշարձան (չհաշված հուշահամալիրները), ինչը, թերևս, չի արտացոլում իրականությունը. դատելով տարբեր աղբյուրներում առկա տեղեկատվությունից՝ հուշարձանների թիվն էսպես ավելի շատ է: Խնդրի շուրջ տե՛ս նաև Խ. Կոբեկյան. Հայոց ցեղասպանությանը և հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարանների մշտական ցուցադրությունների համեմատական վերլուծություն. – ՊԲՀ, 2014, -1, էջ 29–38:

<sup>6</sup> Նկատի ունենք Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը և Հայաստանի պատմության թանգարանի ցուցադրության Հայոց ցեղասպանությանը նվիրված հատվածը, ինչպես նաև Բոստոնի Ամերիկայի հայկական թանգարանի (Armenian Museum of America) և Լոս Անջելեսի Արարատ-Էսքիջյան թանգարանի (Ararat-Eskijian Museum) ցուցադրության մի փոքր հատվածը: Դեր Ձորի Սրբոց Նահատակաց հայկական եկեղեցին՝ դրանում առկա Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցադրությամբ 2012 թ. վնասվեց, իսկ 2014 թ. սեպտեմբերին ամբողջությամբ ոչնչացվեց, այսպես կոչված, Բրաքի և Լևանտի իսլամական պետության անհաբեկչական խմբավորման գրոհայինների կողմից: Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանների ոչ ամբողջական ցանկը՝ 288 հուշարձան 43 երկրներում, լուսանկարներով հանդերձ, առկա է «Յավի, հիշողության և պայքարի կոթողներ» (Երևան, 2010) պատկերազրքում, ինչպես նաև Վաշինգտոնի Հայկական ազգային ինստիտուտի (Armenian National Institute) կայքում <http://www.armenian-genocide.org/memorials.html>, որտեղ հաշվված է 166 հուշարձան և հուշահամալիր աշխարհի 31 երկրներում:

<sup>7</sup> Դրան նպաստող հանգամանքներից մեկն էլ այն է, որ խոսքը վերաբերում է քաղաքական տարբեր, միմյանց հակադիր համակարգերում տեղ գտնող հիշողության քաղաքականությանը:

դուրսն ենք դուրս դուրս գործունեություն է պայմանավորված այս տարբերությունը<sup>8</sup> և ի նչ ոլորտների է առնչվում այն

\* \* \*

Հայոց ցեղասպանությունն իրականացվում էր Օսմանյան կայսրությունում<sup>9</sup>, ասել է թե մեկ պետության սահմաններում: Այն տարածքներում, որտեղ տեղի էին ունենում զանգվածային սպանությունները կամ որտեղից իրականացվում էր հայության բռնագաղթը, հետագայում ստեղծվեցին երկու պետություն՝ Թուրքիան և Միջին, ընդ որում՝ վերջինիս տարածքի որոշ հատվածներ գրեթե բացառապես մահվան երթերի կամ համակենտրոնացման ճամբարների վայրեր էին:

Հրեաների զանգվածային կոտորածները (1941–1945) գերազանցապես տեղի էին ունենում ֆաշիստական Գերմանիայի կողմից օկուպացված կամ նրա ազդեցության ոլորտում գտնվող Կենտրոնական Արևելյան Եվրոպայի երկրներում, նաև Խորհրդային Միության տարածքում, սակայն ոչնչացման դատապարտված հրեա բնակչությունն այդ երկրներում ստեղծված համակենտրոնացման ճամբարներ, զանգվածային ոչնչացման վայրեր բերվում էր նացիստների կողմից գրավված կամ նրանց այս կամ այն կերպ ենթակա մյուս եվրոպական երկրներից նույնպես: Բազմաթիվ երկրներում գործում էին հրեաների ոչնչացումը կազմակերպող հատուկ ջոկատներ, մի շարք դեպքերում այդ

<sup>8</sup> Ստորև հավակնություն չունենք տալ հարցի սպառիչ պատասխանը, քանի որ, թերևս, կան որոշակի կոնկրետ գործոններ, իրավիճակներ, ներհամայնքային խնդիրներ, որոնց մասին տեղեկատվությունը մասշտաբի չէ: Խնդրին հանգամանորեն անդրադարձել ենք նաև հետևյալ հրապարակման մեջ. H. M a r t y a n. Museums and Monuments: Comparative Analysis of Armenian and Jewish Experiences in Memory Policies. – *itudes Arméniennes Contemporaines 3: Juifs, Arméniens: un siècle d'at* (Juin 2014), pp. 57–79.

<sup>9</sup> Հայ պատմագիտության մեջ Հայոց ցեղասպանության իրականացման տարածքային ընդգրկման մասին հանդիպում են տարբեր մտեցումներ: Հայ պատմաբանների մի մասը ցեղասպանության քաղաքականության շարունակություն է որակում նաև թուրքական գործերի 1918 և 1920 թթ. Հայաստան կատարած արշավանքների ընթացքում տեղ գտած զանգվածային կոտորածները, այդ թվում՝ Բաքվի հայության 1918 թ. սեպտեմբերյան ջարդը, որին զոհ գնաց շուրջ 30.000 հայ: Որոշ դեպքերում ցեղասպանության դրսևորում է որակվում նաև նորաստեղծ Ադրբեջանի հանրապետության 1920 թ. ապրիլին իրականացրած Շուշիի հայության կոտորածը: Այդ իսկ պատճառով ստորև առաջնորդվում ենք երկու հիմնարար փաստաթղթերում ամրագրված դրույթներով. ա) Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհրդի 1988թ. նոյեմբերի 22-ի թիվ 1401-XI օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» և բ) Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որի 11-րդ կետում նշված է. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին» (տե՛ս <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2602>):

գործն անում էին հենց տեղական ուժերը: Այս կերպ հաշվելու պարագայում, ուղղակիորեն և անուղղակիորեն, հրեաների Հոլոքոստի ընդգրկման սահմանները ներառում էին 17 (այսօրվա վիճակով՝ 25) եվրոպական երկրներ՝ Գերմանիա, Ավստրիա, Չեխոսլովակիա (Չեխիա, Սլովակիա), Լեհաստան, Նիդեռլանդներ, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Ֆրանսիա, Դանիա, Հարավսլավիա (Սերբիա, Խորվաթիա), Հունաստան, Նորվեգիա, ԽՍՀՄ (Էստոնիա, Լիտվա, Լատվիա, Սոլովյա, Բելառուս, Ուկրաինա, Ռուսաստան), Բուլղարիա, Հունգարիա, Իտալիա, Ռումինիա:

Մա նշանակում է, որ եթե Հայոց ցեղասպանության մասին կոլեկտիվ հիշողությունը՝ զոհերից ու նրանց հարազատներից զատ, կրում էին մեկ-երկու պետության քաղաքացիները, ապա հրեաների Հոլոքոստի մասին կոլեկտիվ հիշողության կրողները 17–25 պետության քաղաքացիներ են: Այսինքն, զանգվածային ջարդերի կամ տեղահանությունների մասին դրանց ժամանակակից, մասամբ և ականատես քաղաքացիների (չհաշված զոհերին ու նրանց հարազատներին) կողմից տեղեկատվության փոխանցումը սերնդեսերունդ մի դեպքում իրականացվել է մեկ-երկու պետական միավորումների, մեկ այլ պարագայում՝ շուրջ երկու տասնյակ ու ավելի պետությունների շրջանակներում: Ասել է թե, երևույթի մասին կոլեկտիվ հիշողության կրողների տարածական ու քանակական շրջանակներն էապես տարբեր էին իրենց չափերով:

Բացի այդ, մեկ այլ էական հանգամանք է և այն, որ եվրոպացիների որոշ մասի (գերազանցապես Ֆրանսիայի ու Հունաստանի քաղաքացիների) համար Հայոց ցեղասպանության մասին կոլեկտիվ հիշողության ձևավորման գործում որոշակի դեր ունեին կենդանի շփումները լոկ ցեղասպանությունը վերապրողների՝ գաղթականների հետ: Այո՛, հայ գաղթականները ժամանակագրական առումով նաև Առաջին համաշխարհային պատերազմի զոհեր էին, սակայն պատերազմի այն թատերարեմի, որը Եվրոպայի տարածքից դուրս էր: Մինչդեռ հրեաների Հոլոքոստի պարագայում Երկրորդ համաշխարհային պատերազմը եվրոպական գրեթե բոլոր երկրների պատմության մասն է եղել, ֆաշիզմի ու նացիզմի իրական դեմքի հետ միլիոնավոր մարդիկ շփվել էին ուղղակիորեն, դա զգացել էին իրենց կաշվի վրա, դա նրանց առնվազն 5–7 տարվա ամենօրյա կյանքի մի մասն է եղել, որոնց զոհ էին գնացել իրենց հարազատները, բարեկամները, հարևանները, ծանոթ ու անծանոթ բազմաթիվ մարդիկ: Այս իրողությունն այս կամ այն կերպ ազդում էր նաև պատմական հիշողությունը կերտող մարդկանց՝ լրագրողների, պատմաբանների, գրողների, արվեստագետների վրա. մի դեպքում քո հաղորդած տեքստը միջնորդավորված է օտարալեզու գաղթականների փոխանցած պատմություններով, մեկ այլ դեպքում՝ դու և քո շրջապատը այդ տեղեկատվության ուղղակի կրողներն են:

\* \* \*

Հայոց ցեղասպանության ժամանակ զոհվեց ավելի քան 1.5 մլն մարդ կամ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող 2.4–2.5 մլն հայության շուրջ 2/3-ը: Փրկված շուրջ կես մլն վերապրողները հիմք դարձան աշխարհով մեկ սփռված հայկական Սփյուռքի ձևավորման, ևս մի քանի հարյուր հազարը ներգաղթեց Արևելյան Հայաստան:

Հրեաների Հոլոքոստի ժամանակ զոհվեց ավելի քան 6 մլն մարդ, ինչը կազմում էր եվրոպական հրեության շուրջ 2/3-ը կամ համաշխարհային հրեության 1/3-ը:

Մա նշանակում է, որ եթե հայոց պարագայում մայր հայրենիքից դուրս բնակություն հաստատած ցեղասպանության վերապրողները կես միլիոնի չափով էին, ապա հրեաների պարագայում՝ շուրջ երեք միլիոն<sup>10</sup>: Այս թվերը զգալի չափով պայմանական են, քանի որ երկու դեպքում էլ ժամանակ անց տեղ գտան բնակչության զանգվածային ներգաղթեր/հայրենադարձություններ դեպի նորաստեղծ երկրներ/պետականություններ: Ճիշտ է, երկու դեպքում էլ վերապրողները, որպես կանոն, բավական ժամանակ (մի քանի տարիներից մինչև մի քանի տասնամյակ, որոշ դեպքերում՝ մինչև կյանքի վերջը) ժառանգների ու շրջապատի հետ չէին կիսվում իրենց պատմություններով, բայց և այնպես, երբ դաժանությունների մասին հիշողությունները հանրության մեծ շրջանակներին ավելի հասանելի դարձան<sup>11</sup>, դրանք ներկայացնողների թիվը որակապես տարբեր էր:

\* \* \*

Հայերի դեպքում ցեղասպանությունը վերապրողների մի մասը ներգաղթեց Ռուսական կայսրության տարածք, ուր Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից մոտ կես տարի առաջ ձևավորվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը (1918 մայիս – 1920 դեկտեմբեր), որը կործանվեց քեմալա-թուրքական ու բոլշևիկա-ռուսական համատեղ ռազմական հարձակումների հետևանքով: Հայաստանի երկրորդ Հանրապետությունը (1920–1991 թթ.) մաս էր կազմում Խորհրդային Միության և շատ ու շատ հարցերում գուրկ էր ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից: Հայոց ցեղասպանությ-

<sup>10</sup> Հաշվարկները տե՛ս, օրինակ, <http://www.historiography-project.com/misc/19970901survivors.html>

<sup>11</sup> Պետք է նկատել, որ գերմանացիների մի զգալի հատվածի համար հրեաների Հոլոքոստի իրողություններն իրենց խորությամբ պարզվեցին շնորհիվ 1950–1960-ականների դատական գործընթացների: Նույն կերպ և իր ժամանակին միջազգային համեմատաբար մեծ հնչեղություն ստացավ Սողոմոն Թեխլերյանի դատավարությունը Բեռլինում 1921 թ.:

յունն իրականացնող երկրի՝ Թուրքիայի դեպքում 1921–1925 թթ. մինչև 1945 թ. գործում էր ռուս/խորհրդային-թուրքական բարեկամության պայմանագիրը, իսկ 1953 թ. ԽՍՀՄ-ը հայտարարեց, որ չունի տարածքային որևէ պահանջներ այդ երկրից<sup>12</sup>: Այսինքն, խորհրդային իշխանության շուրջ 70 տարիների ընթացքում, որոշ ընդմիջումներով հանդերձ, ԽՍՀՄ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ կարելի է բնորոշել իբրև «բարիդրացիական և բարեկամության/փոխըմբռնման» բնույթ ունեցող<sup>13</sup>:

Վերոբերյալ, ինչպես նաև մի շարք այլ գործոններով պայմանավորված, ԽՍՀՄ-ում ու Խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության իրողության նկատմամբ քաղաքականությունը չի եղել միագիծ, այլ փոփոխվել է ժամանակի ընթացքում: Այսպես, խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Հայաստանում Եղեռնի մասին խոսակցություններն աստիճանաբար լռեցին, ընդհանրապես հայ-թուրքական հակամարտությունը հիշելը ոչ միայն չէր խրախուսվում, այլ նաև հետապնդվում էր: Ստալինյան բռնապետության տարիներին Եղեռնի կամ Արևմտյան Հայաստանի մասին բարձրաձայն արտահայտված մտքերը, որպես կանոն, որակվում էին իբրև ազգայնականության դրսևորումներ ու պատժվում բանտարկությամբ, աքսորով կամ գնդակահարությամբ: Իրավիճակն սկսեց աստիճանաբար փոխվել 1950-ական թվականների երկրորդ կեսից՝ պայմանավորված խրուշչովյան «ձնհալով», որի բարձրակետը 1965 թ. ապրիլի 24-ի՝ Հայոց ցեղասպանության 50-ամյակի նշման ժամանակ Երևանում տեղ գտած զանգվածային ելույթներն էին: Այդ ելույթները, ինչպես և դրանց նախորդող ու հաջորդող՝ գրականության ու արվեստի մեջ ցեղասպանության թեմայի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճը վկայում են, որ ցեղասպանության հիշողությունը, չնայած այն լռության մատնելու պաշտոնական քաղաքականությանը, շարունակում էր ապրել մարդկանց հոգիներում ու գիտակցության մեջ: Սակայն այդ հիշողության մեջ հայերը բացառապես ներկայացվում էին որպես անմեղ զոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը և կարիք է զգում կարեկցանքի, այսինքն՝ այս կամ այն կերպ շեշտադրվում էր լոկ ցավի, կորստի, զոհի հիշողությունը: Ազգային-ազատագրական պայքարի, ֆիդայական կռիվների հերոսների, ինչպես նաև անկախ պետականության թեմայի առանց կապանքների, ազատ արձարձումը գաղափարախոսական առումով, այնուամեն-

<sup>12</sup> Սովետա-թուրքական հարաբերությունների շուրջը. – □Սովետական Հայաստան□, 19. VII. 1953: Մանրամասն տե՛ս Ա. Киракосян. Предисловие. – В сб.: Армения и советско-турецкие отношения в дипломатических доку-ментах 1945–1946 гг. Ереван, 2010, с. 5–52.

<sup>13</sup> Տե՛ս Ա. Киракосян. Նշվ. աշխ., էջ 5:

նայնիվ, շարունակում էր մնալ չհայտարարված արգելանք<sup>14</sup>: Այդ ժամանակաշրջանի Եղեռնի թեման շոշափող գործերի հիմնական բովանդակությունը կարելի է ձևակերպել Միլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմի «խաղաղ վրեժի» պատգամով՝ «Դու պիտի վրեժ առնես ապրելով» կոչով<sup>15</sup>, որը, փաստորեն, նաև Յեղասպանության հիշողության բնագավառում տարվող պետական գաղափարախոսության քաղաքականության գեղարվեստական ձևակերպումն էր<sup>16</sup>: 1965–1967 թթ. կառուցվեց Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը<sup>17</sup>, իսկ 1975 թվականից Խորհրդային Հայաստանի դեկավարները սկսեցին պաշտոնապես այցելել այն՝ առաջին ծաղկեպսակները դնելով հուշարձանին: Դրանով, ինչպես նաև Լոռույան բուսակով, Մեծ եղեռնի զոհերի հիշատակի արարողությունը ստացավ պետական հնչեղություն: 1988 թ. նոյեմբերի 22-ին ընդունվեց Հայկական ԽՍՀ օրենքը «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին», որը ապրիլի 24-ը հայտարարեց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: 1990 թ. օգոստոսի 23-ին ցեղասպանության հարցը «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին» ձևակերպումով տեղ գտավ Անկախության հռչակագրի մեջ և այդ կերպ հայտարարվեց նաև Հայաստանի արտաքին քաղաքականության ուղ-

<sup>14</sup> Մանրամասն տե՛ս Ա. Կ. Եղի ա գ ա թ յ ա ն. Եղեռնի արտացոլումը խորհրդահայ գրականության մեջ. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, -4, էջ 36–47:

<sup>15</sup> Տե՛ս Ա. Կ ա պ ու տ ի կ յ ա ն. Մտորումներ ճանապարհի կեսին, Երևան, 1961, էջ 112:

<sup>16</sup> Հարցի շուրջ տե՛ս Հ. Մ ա թ ու թ յ ա ն. Հայ ինքնության պատկերագրությունը, հ. 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, 2009, էջ 70–71:

<sup>17</sup> Նկատենք, որ 1960-ականների առաջին կեսից էր, որ Խորհրդային Միությունում սկսեցին կառուցվել Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի առթիվ մեմորիալ բնույթի հուշարձանային համալիրներ, ինչպես, օրինակ, ստալինգրադյան ճակատամարտի հերոսներին նվիրված հուշահամալիրը Վոլգոգրադում (1963–67 թթ.), Անհայտ զինվորի հուշարձանը Մոսկվայի Կարմիր հրապարակում (1965–67 թթ.) և այլուր (հմմտ. Н. Конрадова. А. Рылева. Герои и жертвы: Мемориалы Великой Отечественной. – «Неприкосновенный запас», 2005, № 2–3, с. 138–139): Այսինքն, Յեղասպանության զոհերի հուշարձանային համալիրը, այսպես թե այնպես, տեղավորվում է հուշային բնույթի՝ հենց այդ տարիներին սկսված, կառուցումների շարքում: Այս առումով բնութագրական է Ս. Կապուտիկյանի ընկալումը՝ արտացոլված 1975 թ. ԽՍՀՄ դեկավարությանն ուղղված նամակում. «Իսկ նրա [Յեղասպանության զոհերի հուշարձանի] խորհուրդը նույնն է, ինչ որ Ստալինգրադի, Օսվենցիմի, Լիդիցայի, Սպալասկիսի, Հիրոսիմայի հուշարձաններինը, ինչ որ ֆաշիստների կողմից մոխրացրած բելոռուսական Խատին գյուղի մեմորիալ համակառուցինը. «Մարդիկ, մի՛ մոռացեք ջարդի ու բռնության զոհերին, մի՛ թողեք, որ այն երբևիցե կրկնվի աշխարհում» (Ս. Կ ա պ ու տ ի կ յ ա ն. Էջեր փակ գորոցներից, Երևան, 1997, էջ 142):

դություններից մեկը: Այսօր Հայոց ցեղասպանության հիշողությունը հայկական ինքնության հիմնասյուններից է:

Մի քանի հարյուր հազար հրեա վերապրողներ վերաբնակվեցին Երկրորդ համաշխարհայինից երեք տարի անց ստեղծված Բուրայելում: Նրանք ակտիվորեն ներգրավվեցին իսրայելական նորաստեղծ հասարակության ձևավորման գործում, և շուրջ երկու տասնամյակ անց Հոլոքոստի հիշողությունը դարձավ Բուրայելի ազգային ինքնության կենտրոնական բաղադրիչներից մեկը<sup>18</sup>: Հրեական խորհրդարանը 1953 թ. որոշեց սահմանել «Հոլոքոստի նահատակների և հերոսների հիշատակի օր»: Նույն թվականին էլ հիմնադրվում է «Յադ Վաշեմ. Հոլոքոստի նահատակների և հերոսների [մասին] հիշողության [ապահովման] իրավասու մարմին» անունը կրող հուշահամալիրը՝ թանգարանի հետ միասին<sup>19</sup>: Ինչպես նկատել է գերմանացի հետազոտող Մաթիաս Հասը, իր գոյության առաջին տարիներին Յադ Վաշեմը կենտրոնական տեղ չէր զբաղեցնում Բուրայելի հուշային մշակույթում: Հոլոքոստի մասին հիշողությունն անգամ հասարակության համար չուներ խիստ կարևոր նշանակություն. ավելի կարևոր առաջնահերթություններ էին դիտվում պետության և հասարակության զարգացումը, ինչը շատ փոքր տեղ էր թողնում անցյալի վերհիշման համար: Իրավիճակը սկսվում է փոխվել 1967 թ.: Արաբա-իսրայելական «վեցօրյա պատերազմից» հետո Յադ Վաշեմը ներգրավվեց հիշողության քաղաքականության հարցերի շուրջ տարվող քննարկումների մեջ, իսկ հրեաների Հոլոքոստի պատմությունն սկսեց օգտագործվել հասարակությունը մոբիլիզացնելու համար: Այդ քննարկումներում կռիվները նացիստների դեմ միավորվեցին 1948, 1967 և 1973 թթ. մղված անկախության պատերազմների հետ՝ այդպիսով ձևավորելով հրեա ժողովրդի կողմից մղվող մեկ գոյապայքարի երևույթը<sup>20</sup>:

Այսինքն, եթե Հայաստանի դեպքում Ցեղասպանության մասին քիչ թե շատ ակտիվ քննարկումները (գեղարվեստական գրականության,

<sup>18</sup> Հարկ է նկատել, որ եթե հրեական սփյուռքում շեշտադրումներն արվում են առավելապես զոհի գործոնին, ապա Բուրայելում շատ ավելի մեծ ուշադրություն է հատկացվում Հոլոքոստի տարիներին տեղ գտած հրեաների դիմադրության հարցին:

<sup>19</sup> Հոլոքոստին նվիրված առաջին թանգարանն Բուրայելում հիմնադրվել է Հոլոքոստը վերապրողների կողմից արդեն 1949 թ. գարնանը: Ինչպես թանգարանի անվանումն է հուշում՝ «Գետտոներում պայքարողների տուն» (Ghetto Fighters' House – Itzhak Katzenelson Holocaust and Jewish Resistance Heritage Museum), ցուցադրությունն առավելապես նվիրված էր Երկրորդ համաշխարհային պատերազմում հրեաների դիմադրության թեմային (մանրամասն տե՛ս <http://www.akk.org.il/en/Old-Acre-The-Ghetto-Fighters'-House->):

<sup>20</sup> Մանրամասն տե՛ս Matthias Haß. The Politics of Memory in Germany, Israel and the United States of America. The Canadian Centre for German and European Studies, Working Paper Series Number 9, pp. 6–12.



նան պատմագիտության մեջ) սկսեցին տեղ գտնել «Մեծ Եղեռնի/Յեղասպանության» տարիներ ընկալվող 1915–1916 թթ. 40–50 տարի հետո, հանրապետության ղեկավարների մասնակցությամբ առաջին այցելությունը Յեղասպանության զոհերի հուշարձան տեղի ունեցավ 60 տարի հետո, Յեղասպանությունը քաղաքական գործոն դարձավ 75 տարի հետո, իսկ առաջին թանգարանը բացվեց Յեղասպանությունից միայն 80 տարի անց, ապա Բսրայելի դեպքում Հոլոքոստի ավարտից 8 տարի հետո համապատասխան օրենքով սկսվեցին Հոլոքոստի զոհերի ամենամյա հիշատակումները պետական մակարդակով ու ստեղծվեց առաջին թանգարանը: Սա, բնականաբար, նշանակում է նաև քարոզչության որակապես տարբեր հնարավորություններ ու մասշտաբներ: Հայոց պարագայում երևույթի հիմքում ընկած էր նաև անկախ պետականության բացակայության փաստը (բնութագրական է, որ ԽՍՀՄ-ը այդպես էլ չճանաչեց Հայոց ցեղասպանությունը), ինչը, ի թիվս այլ գործոնների, գրկում էր ներքին ու արտաքին ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից թեկուզ Յեղասպանության ուսումնասիրության ու քարոզչության, որոշակի ինքնության ձևավորման հարցերում:

\* \* \*

Պետք է նկատի ունենալ ևս մի կարևոր հանգամանք, որն էական նշանակություն ունեցավ Հայոց ցեղասպանության գործոնը միջազգային հանրությանը ներկայացնելու առումով: Բանն այն է, որ Խորհրդային Հայաստանի կուսակցական ղեկավարությունը փորձելով իր վերադասի՝ ԽՄԿԿ ԿԿ-ի հավանությունը ձեռք բերել «1915 թվականին հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի առթիվ միջոցառումներ» անցկացնելու մասին, հստոքեն օգտագործեց հայկական Սփյուռքի գործոնը, և խնդիրը տեղափոխեց գաղափարախոսական ոլորտ: Մասնավորապես, ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Յա. Չարոբյանի ԽՄԿԿ - Կենտկոմին 1964 թ. դեկտեմբերին ուղղված նամակում<sup>21</sup> շեշտվում էր, որ «սփյուռքահայ հետադեմ ուժերը (նկատի ունենալով թերևս «Դաշնակցություն» կուսակցությանը)» հայտարարում են, որ «Խորհրդային Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման տարեդարձերը ոչ մի ձևով չեն նշվում», պնդում են, «որ իբր մեր երկրում հարյուր հազարավոր հայրենակիցների հիշատակին անտարբեր են վերաբերվում, և որ իբր դրանով մեզ մոտ ցեղասպանության քաղաքականությունը առարկայաբար արդարացվում է»: Եվ եզրակացվում էր, որ «նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակը ԽՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանակի, տնտեսության,

<sup>21</sup> Մանրամասն տե՛ս Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2005, էջ 37–40:

մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի հսկայական ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո նշել»։ Առաջարկվում էր, «այդ ամբողջ աշխատանքը պետք է իրականացվի այնպես, որ պեսոսի այն բացասաբար չազդի հարևան երկրների հետ և մասնավորապես Թուրքիայի հետ ԽՍՀՄ-ի փոխհարաբերությունների բարելավման քաղաքականության վրա, և հետապնդի նպատակ, որպեսզի ժողովուրդների պատմության մեջ համանման ողբերգություն այլևս չկրկնվի (ընդգծումն իմն է – Ն. Մ.)»։ Ահա այս վերջին ձևակերպումը շատ գաղափարախոսական, շատ խորհրդային և համընդունելի դրույթ էր, որն առանձնապես հաճախ էր օգտագործվում Հայրենական մեծ պատերազմի ու նրա առանձին դրվագների բնութագրման համար։ Մյուս կողմից, այս ձևակերպումը ցուցիչ էր այն բանի, որ Հայոց ցեղասպանությունը դուրս էր բերվում զուտ հայկական ողբերգություն լինելու դրույթից և դրվում էր համաշխարհային պատմության հարթության մեջ<sup>22</sup>։

Մյուս կարևոր գաղափարախոսական կանխադրույթը, որ առկա էր վերոհիշյալ նամակում առանձին կետի ձևով, հետևյալն էր՝ «Երևանում կանգնեցնել առաջին համաշխարհային պատերազմում զոհված հայ նահատակներին նվիրված կոթող։ Կոթողը պետք է խորհրդանշի հայ ժողովրդի վերածնունդը (ընդգծումները մերն են – Ն. Մ.)»։ Այստեղ օգտագործված «առաջին համաշխարհային պատերազմ» ձևակերպումը ոչ միայն զուտ ժամանակագրական ցուցիչի դեր էր կատարում, այլ նույնպես խնդիր էր դնում երևույթը տեղափոխել «համաշխարհային» հարթություն։ Մյուս կողմից, խորհրդային գաղափարախոսությունը, հետևելով լենինյան բնութագրումներին, տասնամյակներ շարունակ Առաջին աշխարհամարտը ներկայացնում էր իբրև «իմպերիալիստական պատերազմ»<sup>23</sup>։ Իսկ աշխարհում հենց Խորհրդային Միությունն էր, որ դեկավարելով «համաշխարհային սոցիալիզմի» ճամբարը, բոլոր

<sup>22</sup> 1990-ական թվականների վերջից, արդեն շուրջ մեկուկես տասնամյակ Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը դարձել է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության բաղադրամասերից մեկը։ Այս երևույթը նույնպես կարելի է բնութագրել իբրև Հայոց ցեղասպանության խնդիրը հայկական նեղ շրջանակներից դուրս բերելու ու միջազգայնացնելու փորձ։

<sup>23</sup> Մանրամասն տե՛ս Լ. Федоров. В. И. Ленин и И. В. Сталин о Первой империалистической войне.– ,Военно-исторический журнал. М., 1939, № 1, с. 133–137. Հմմտ. օրինակ. Вторая империалистическая война началась. Политическое управление РККА (В помощь пропагандисту РККА). М., 1938. Խորհրդային պատմագիտության մեջ ուղենիշային էր գնահատվում Վ. Ի. Լենինի ձևակերպումն իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու մասին, որն այնուհետև պետք է հանգեցնի հեղափոխության։ Մանրամասն տե՛ս, օրինակ, В. И. Ленин и И. В. Сталин. Полное собр. соч. т. 26. Предисловие. М., 1969, с. VII–XXVII.

հնարավոր միջոցներով դիմակայում էր «համաշխարհային իմպերիալիզմին»:

Հաջորդ էական պահն այն էր, որ որևէ բնութագրամաք չէր նշվում հայերին «գոհված հայ նահատակներ» դարձնողների մասին. կարևորն այն էր, որ դա տեղի էր ունեցել «առաջին համաշխարհային պատերազմի» ժամանակ: Այս տեսանկյունից բնութագրական է, որ ՀԿԿ Կենտկոմի նախագահության և Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի ներհանրապետական ընդգրկում ունեցող որոշումներում<sup>24</sup> արդեն «առաջին համաշխարհային պատերազմ» ձևակերպումը չի հանդիպում:

Ոչ պակաս կարևոր շեշտադրում էր «հայ ժողովրդի վերածնունդ» ձևակերպումը, քանի որ խորհրդային գաղափարախոսությունը տասնամյակներ շարունակ քարոզում էր, որ հենց խորհրդային կարգերի հաստատումը փրկեց հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից ու ստեղծեց պայմաններ նրա իրական «վերածննդի» համար:

Եթե ընդհանրացնենք, ապա պետք է ֆիքսել, որ դիտարկվող նամակի հիմնական դրույթներն իրականում ուղենիշային ձևակերպումներ էին: Դա այն մարտավարական օրինակներից է, որ երբ պետք է դրական լուծումների ակնկալիքով Հայոց ցեղասպանության խնդիրը ներկայացնել հարցին ոչ շատ տեղյակ քաղաքական (տվյալ դեպքում՝ նաև կուսակցական) վերնախավին, ապա պետք է «խոսել» այդ վերնախավի համար հասկանալի և ընդունելի, տվյալ դեպքում՝ «խորհրդային գաղափարախոսության» լեզվով, մասնավորապես, դուրս բերելով հարցը էթնիկական հակամարտության ոլորտից:

\* \* \*

Մինչդեռ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործին լծված հայաստանյան պատմագիտության մեջ ձևավորվեց այլ մոտեցում: Բանն այն է, որ թուրքական ժխտողականության առկայության պայմաններում գերակշռություն ստացավ նորանոր փաստեր հայտնաբերելու ու շրջանառության մեջ դնելու ճանապարհով ցեղասպանության իրողությունն ամեն կերպ ապացուցելու միտումը, ինչն էլ, իր հերթին, բերեց նրան, որ ցեղասպանության խնդիրը, կողքից դիտելու դեպքում, կարծես թե մնաց էթնիկական հակամարտության ոլորտում: Նկատի ունեմ, որ Հայոց ցեղասպանությանը նվիրված աշխատությունների զգալի մասում շեշտադրումներն առավելապես թուրքերի կողմից (դահիճներ) հայերին (գոհերին) կոտորելու, զանգվածաբար ոչնչացնելու շուրջն է և, կամա թե ակամա, շեշտվում է մեկ էթնիկական հանրության կողմից մյուս էթնիկական հանրությանը ոչնչացնելու հանգամանքը: Իր հերթին, «ապացուցելուն» ուղղված մոտեցումը Հայաստանի

<sup>24</sup> Տե՛ս, օրինակ, Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, էջ 48, 60, 64:

արտաքին քաղաքականության մեջ բերեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցին առաջնահերթություն տալուն:

Ի հակառակ հայոց պարագային, հրեաների նկատմամբ իրագործված դաժանությունները, ի թիվս պատերազմական և մարդկության դեմ ուղղված նացիստական հանցագործությունների, դատապարտման արժանացան դեռևս Նյուրնբերգյան դատավարության ընթացքում (1945–1946), ապա և հետագա տասնամյակներին: 1951 թ. սեպտեմբերին ԳՖՀ կանցլերը պաշտոնական հայտարարությամբ հանդես եկավ երկրի խորհրդարանում, նշելով, որ Գերմանիան պատրաստ է փոխհատուցումներ վճարել Իսրայելին նացիստական հանցագործությունների համար<sup>25</sup>: Այսինքն, հրեաների Հոլոքոստը ընդամենը մեկ-երկու տասնամյակում ճանաչվեց թե՛ միջազգայնորեն և թե՛ այն իրականացնող գլխավոր երկրի նոր դեկլարության կողմից: Եվ չնայած հակասեմիտիզմի ու ժխտողականության առկայությանը (ինչը նույնպես միջազգայնորեն դատապարտվում է ու շատ դեպքերում պատժվում օրենքով) Հոլոքոստի պատմաբանների ուսումնասիրությունները, մեծ հաշվով, ուղղված չեն Հոլոքոստի իրողության ապացուցմանը, ինչպես որ է Հայոց ցեղասպանության դեպքում: Մանավանդ, որ 2005 թ. նոյեմբերին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան որոշեց սահմանել Հոլոքոստի հիշողության միջազգային օր:

Այսպես թե այնպես, արդեն մի քանի տասնամյակ է, ինչ հետազոտողների զգալի մասը հրեաների Հոլոքոստի դեպքում շեշտում են ոչ թե «գերմանացիների» (որպես էթնիկական միավոր), այլ «ՄՄ-ի», «նացիզմի», «ֆաշիզմի», «ռասիզմի» և համարժեք այլ գաղափարախոսական հասկացությունների մեղավորությունը, այսինքն՝ անցյալում տեղ գտած հակամարտությանը չեն հաղորդում էթնիկական որակումներ, այլ դրանք դիտում են միայն իբրև հանցագործ բնույթ ունեցող գաղափարախոսության իրագործման արդյունք<sup>26</sup>: Հայոց ցեղասպանության ուսումնասիրության դեպքում թուրքական ժխտողականությունը և միջազգային մասնակի ճանաչումը թույլ չեն տալիս ցեղասպանության հարցը էթնիկական ոլորտից տեղափոխել գաղափարախոսական ոլորտ, ցեղասպանական արարքները ներկայացնել որպես ռասիզմին հարող ծայրահեղ ազգայնականության բնույթ ունեցող երիտթուրքական գաղափարախոսության դրսևորում: Այլ կերպ ասած, Հայոց ցեղասպանության հետազոտողները պատմագիտական և քարոզչական

<sup>25</sup> Հարցի շուրջ տե՛ս, օրինակ, Հ. Մարտիթյան. Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը. ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը. – «21-րդ դար», 2008, -4, էջ 135–155:

<sup>26</sup> Հարցի քննարկումը տե՛ս նաև Հ. Մարտիթյան. Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, էջ 28–29:

առումներով բավարար չափով չեն ուսումնասիրել ու շեշտադրել, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքերին առաջնորդող պանթուրքիզմը բազմաթիվ գծերով նույնն էր, ինչ Երկրորդ համաշխարհային պատերազմը նախապատրաստած նացիզմը: Մեր գնահատմամբ, այս գործոնները «աշխարհի հետ խոսելու» հարցում բարդություններ են ստեղծում հայոց կողմի համար, ինչ-որ չափով թուլացնում հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, նվազեցնում նրա քաղաքական «պահանջարկը», ընկալման մատչելիությունը, թույլ չեն տալիս այն ներկայացնել որպես մարդասոց գաղափարախոսության հետևանքով առաջացած համամարդկային աղետի մի մաս, որը, ինչպես և հրեաների Հոլոքոստը, հանգեցրեց միլիոնավոր մարդկանց ոչնչացման:

\* \* \*

Վերոնշյալ միտքն ավելի ակնառու է դառնում, երբ վեր է լուծվում հողվածի սկզբում հիշված հրեաների Հոլոքոստին նվիրված 67 թանգարանների տեղադրությունը: Այո, դրանց կեսից ավելին՝ 34-ը, տեղակայված են Եվրոպայի տարածքում<sup>27</sup> ու, չհաշված Միացյալ Թագավորությունը (որտեղ երկու թանգարան կա), մյուս 12 պետությունները (ներառյալ Գերմանիան) Երկրորդ համաշխարհային ժամանակ օկուպացվել են կամ գտնվել են Երրորդ Ռայխի ազդեցության ոլորտում: Միննույն ժամանակ, թանգարանների ընդհանուր թվի մյուս կեսի մեծ մասը՝ թվով 19, գտնվում են ԱՄՆ տարածքում, երկուական՝ Ավստրալիայում, Կանադայում և Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում, մեկական՝ Արգենտինայում, Կուբայում, Դոմինիկյան Հանրապետությունում և Ճապոնիայում (ևս չորսը՝ Իսրայելում):

Իսկ ինչու՞ են ԱՄՆ տարածքում տեղակայված հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարանների ընդհանուր թվի գրեթե 1/3-ը (28 %-ը)<sup>28</sup>: Պատճառը, թերևս, ոչ միայն հրեական համայնքի մեծաքանակ ու ազդեցիկ լինելն է: Միացյալ Նահանգների Հոլոքոստի հուշային թանգարանի (ՄՆՀՀԹ) ստեղծման պատմությանը նվիրված աշխատության հեղինակ Էդվարդ Լինենթալը, առաջին իսկ նախադասության մեջ օգտագործում է հետևյալ միտքը. «Հոլոքոստը դարձավ իրադարձություն, որը պաշտոնապես ներգրավվեց ամերիկյան հիշողու-

<sup>27</sup> 1947 թ. հունիսին Աուշվից-Բիրկենաու նախկին համակենտրոնացման ճամբարում բացվեց թանգարան ([http://en.auschwitz.org/m/index.php?option=com\\_content&task=view&id=227&Itemid=13&limit=1&limitstart=7](http://en.auschwitz.org/m/index.php?option=com_content&task=view&id=227&Itemid=13&limit=1&limitstart=7)), ինչին հաջորդեցին թանգարանները մի քանի այլ նախկին համակենտրոնացման ճամբարներում:

<sup>28</sup> Հոլոքոստին նվիրված առաջին թանգարանը ԱՄՆ-ում բացվել է 1960-ական թվականների սկզբին, Լոս Անջելեսում (մանրամասն տե՛ս <http://www.lamoth.org/the-museum/history/>):

թյան մեջ»<sup>29</sup>: Այս միտքը հետագայում բազմիցս քննարկվում է գրքի շատ այլ էջերում, նշվում են «Հոլոքոստի ամերիկանացման» երևույթի դրական և բացասական գծերը<sup>30</sup>: Այսինքն, մենք գործ ունենք մեկ էթնիկական հանրությանը, մեկ ժողովրդին վերաբերող, խորապես ազգային բնույթ ունեցող ողբերգությունը էթնիկականության սահմաններից վեր հանելու և որպես «միջազգային մակարդակի չարիք»՝ ընդունելի ձևով համաշխարհային հանրությանը ներկայացնելու փորձի հետ: Համենայնդեպս, ՄՆՀՀԹ-ն գործում է արդեն երկու տասնամյակից ավել, ընդունել է շուրջ 35 մլն այցելու և բոլորին ցույց է տալիս, թե ինչ է պատահում մարդկությանը (կամ նրա մի բաղկացուցիչ հատվածին), երբ ոտնահարվում են ժողովրդավարության հիմնարար (ասել է թե՛ նաև ամերիկյան) արժեքները: Այսինքն՝ Հոլոքոստի հիշողությունն արդեն աշխարհի կողմից պաշտոնապես դիտվում է իբրև չարիքի դեմ պայքարի միջազգային հիշողության կարևորագույն մաս: Մա՛ է այն նիշան, որը գրավելու խնդիր ինչ-ինչ պատճառներով չդրվեց Հայոց ցեղասպանության դեպքում: Այն հիմնականում մնաց համեմատաբար նեղ, ազգային սահմաններում:

\* \* \*

Վերն արդեն նշվեց, որ հրեաների Հոլոքոստին նվիրված ավելի քան երեք տասնյակ թանգարան է գործում Եվրոպայում, որի քաղաքացիները նշանակալի չափով Հոլոքոստի կոլեկտիվ հիշողության կրողներն են: Հայոց ցեղասպանության հիշողությունը այս կամ այն չափով առկա է նաև Թուրքիայի Հանրապետությունում: Սակայն այստեղ այն տասնամյակներ շարունակ ժխտվում է: Ու, բնականաբար, պետական գաղափարախոսության մակարդակ բարձրացված ժխտողականության պայմաններում ինչ խոսք կարող է լինել Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանների կամ ցուցադրությունների և կամ հուշարձանների մասին:

Այսինքն, Ցեղասպանության/Հոլոքոստի իրականացման տարածքներում միլյանցից տրամագծորեն հակառակ մոտեցում է առկա երևույթի գնահատման ու քարոզման հարցում: Արդյունքն էլ, բնականաբար, համապատասխան է. Եվրոպայում գործում է հրեաների Հոլոքոստին նվիրված աշխարհում առկա թանգարանների կեսը, Թուրքիա-

<sup>29</sup> E. T. Linenthal. Preserving Memory: The Struggle to Create America's Holocaust Museum. New York, 1995, p. 1.

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 44, 216 և այլն: Այս երևույթը լայնորեն քննարկվում է նաև Հոլոքոստի հիշողությանը նվիրված շատ այլ աշխատություններում: Երևույթի հանգամանալի քննարկումը տե՛ս նաև Հ. Մարտիջյան. Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, էջ 37-41:

յում՝ և ոչ մեկը նվիրված Հայոց ցեղասպանությանը: Առկա է մեկ թանգարան (ներկայումս՝ ավերված) Սիրիայի տարածքում, Տեր Ջոր անապատում գտնվող Սրբոց Նահատակաց եկեղեցում: Յուրահատուկ անդրադարձ այս իրողությանը կատարեց ՀՀ Նախագահը 2010 թ. մարտի 24-ին, Սիրիա և, մասնավորապես, Տեր Ջորի Սրբոց Նահատակաց եկեղեցի կատարած այցի ընթացքում: Իր ելույթում նա նկատեց. «Հաճախ պատմաբաններն ու լրագրողները հիմնավոր կերպով Դեյր Ջորը համեմատում են Օսվենցիմի հետ՝ ասելով. «Դեյր Ջորը հայերի Օսվենցիմն էր»: Կարծում եմ, որ ժամանակագրությունը մեզ պարտադրում է իրողությունները ձևակերպել այլ կերպ. «Օսվենցիմը հրեաների Դեյր Ջորն էր»: Ընդամենը մեկ սերունդ հետո մարդկությունն ականատես եղավ հրեաների Դեյր Ջորին»<sup>31</sup>:

\* \* \*

Հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարանների ձևավորման ու գործունեության հարցում, անտարակույս, իր տեղն ու դերն ունի նաև հրեական գործունը: Ընդ որում, տարբեր երկրներում այն տարբեր ձևաչափեր ունի: Մի դեպքում էական է տվյալ երկրի (նահանգի, բնակավայրի) հրեական համայնքի ակտիվությունը, մեկ այլ դեպքում՝ հրեական միջազգային կամ սփյուռքյան հենքով հասարակական կազմակերպությունների կամ հիմնադրամների մասնակցությունը: Ոչ քիչ դեպքերում թանգարանների գործունեությունը ֆինանսավորվում է թե՛ տվյալ պետության և թե՛ հրեական կազմակերպությունների կամ անհատ բարերարների կողմից: Այդպես է, օրինակ, ՄՆՀՀԹ-ի դեպքում: Այսինքն, հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարանի, ինչպես նաև մեծ կամ փոքր հուշարձանի կամ հուշահամալիրի առկայությունը նաև համայնքի կազմակերպվածության, համախմբվածության, ակտիվության, վերջապես հզորության ցուցիչն է: Կարող է պարադոքսալ թվալ, սակայն թանգարան ստեղծելու մասին հայտարարությունը ու դրան ուղղված գործունեությունը նույնպես կարող է բերել համայնքի կազմակերպվածության ու ակտիվության աճի: Վերջապես, եթե առկա է համապատասխան գաղափարախոսական հիմնավորվածություն, թանգարանի գործունեության ֆինանսական օժանդակությունը հաճախ դուրս է գալիս նեղհամայնքային շրջանակներից և ընդգրկում է տվյալ պետության քաղաքացիներին նույնպես՝ թե՛ անհատական բարեգործության, թե՛ բյուջետային (ձևավորված բոլորի կողմից վճարվող հարկերից) մասնահանումներ կատարելու ճանապարհով:

Հայոց դեպքում, ինչպես վերը նշվեց, Եղեռնի վերաբերյալ գաղափարախոսական շեշտադրումները բավարար չէին: ԱՄՆ-ում, ինչպես նաև

<sup>31</sup> Տե՛ս <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2010/03/24/news-58/>

ելրոպական երկրներում ձևավորված լոբբիստական կառույցներն իրենց գործունեության գլխավոր խնդիրներից էին համարում Հայ դատի հետապնդումը և, հետևաբար, շեշտն առավելապես դնում էին քաղաքական շրջանակների հետ աշխատելու ճանապարհով Հայոց ցեղասպանության ճանաչմանը հասնելը<sup>32</sup>: Այո, գերագանցապես համայնքների ու հայազգի անհատ բարերարների միջոցներով կառուցվեցին բազմաթիվ հուշարձաններ: Սակայն հուշարձանները, մեր գնահատմամբ, առավելապես ուղղված են համայնքի իսկ անդամներին ու գերագանցապես ծառայում են որպես Յեղասպանության զոհերի ամենամյա ապրիլքսանչորսյան ոգեկոչման վայրեր:

Հուշարձանի քարոզչական արժեքը տվյալ երկրի քաղաքացիների համար համեմատաբար ցածր է: Հուշարձանի միջոցով Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվում է կա՛մ հուշարձանի վրա առկա գրությամբ<sup>33</sup>, կա՛մ հայազգի մարդկանց հետ անձնական շփումների և կա՛մ գրքերից, մամուլից ու համացանցից տեղեկատվություն քաղելու ճանապարհով: Հուշարձանի համեմատ թանգարանի քարոզչական արժեքն անհամեմատ մեծ է: Այսպես, թանգարանային ցուցադրությունը տեղեկատվություն է տրամադրում շատ ավելի համակարգված ձևով, ամեն օր ու տարբեր լեզուներով: Սակայն այն ոչ միայն համախմբված, մեկնաբանված, տեխնիկապես և գեղարվեստորեն ձևավորված թանգարանային առարկաների նպատակառոտորված, գիտականորեն հիմնավորված ցուցադրումն է: Թանգարանային ցուցադրությունն է, որ ավելի մեծ ու լայն հնարավորություններ է տալիս

<sup>32</sup> Վերջերս հայաստանյան իրականության մեջ հնչում է տարաբնույթ քննադատություն ՀՀ կամ սփյուռքյան կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջ տարվող բազմամյա քաղաքականության վերաբերյալ: Մոռացվում է առնվազն մեկ կարևոր հանգամանք: Եթե որևէ պետություն պաշտոնապես չի ճանաչում Հայոց ցեղասպանության իրողությունը, ապա այդտեղ Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարաններ, ժամանակավոր ցուցադրություններ, անգամ հուշարձաններ կառուցելու գործը մի դեպքում բացեիքաց, մեկ այլ դեպքում՝ քողարկված ձևով, սակայն հանդիպում է դժվարությունների, երբեմն՝ անհաղթահարելի խոչընդոտների: Այդպես է, օրինակ, Գերմանիայում: Կարծիք կա, որ դա է պատճառը այն իրողության, որ Մպիտակ տնից ընդամենը երկու թաղամաս այն կողմ՝ այնուամենայնիվ առ այսօր չի հաջողվել հիմնել թանգարան, իսկ ԱՄՆ-ում գործող Հոլոքոստի թանգարանները Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցադրություններ չեն իրականացնում պատճառ բռնելով պետության կողմից դրա պաշտոնական ճանաչման բացակայությունը, ինչպես որ է, օրինակ, Մեծ Հիթլերի պարագայում:

<sup>33</sup> Հուշարձանների տեղեկատվական մակարդակը կարող է բարձրացվել դրանց վրա կամ մերձակայքում համապատասխան բարկողերի տեղադրման միջոցով: Սակայն, միևնույն է, այդ կերպ մատուցվող տեղեկատվությունը չի կարող փոխարինել թանգարանային ցուցադրությամբ հրամցվող, նաև հուզականություն պարունակող ցուցանմուշներին:



ոչ միայն պահպանելու, այլև տարածելու ցեղասպանության հիշողությունը ներէթնիկ շրջանակներից դուրս, այդ կերպ փորձելով այն ներմուծել այլ ազգերի ու պետությունների արժեքային համակարգերի, ինչու ոչ նաև ինքնության մեջ: Թանգարանային ցուցադրությունների և թանգարանների գիտակրթական, մշակութային, քարոզչական գործունեության միջոցով է, որ հնարավորություն է ստեղծվում բազմահազար այցելուներին ներկայացնել քաղաքական որոշակի դիրքորոշումներ ու ազգային խնդիրներ: Թանգարանային ցուցադրությունը յուրատեսակ մշակութային տեքստ է, հասարակական հիշողության համակարգ, որին հաղորդակցվելու ճանապարհով տարբեր դիրքորոշում ունեցող մարդկանց մեջ ինչ-ինչ հարցերի շուրջ կարող են ձևավորել միասնական մտեցումներ:

Ինչպես վերը նշվեց, աշխարհով մեկ սփռված հայկական համայնքները նախ և առաջ Ցեղասպանության հետևանք են: Դա լավ է թե վատ, սակայն հե նց ցեղասպանության հիշողությունն է կազմում նրանց ինքնության հիմքը: Ու մեկ դար առաջ իրենց ապաստան տված պետության քաղաքացիներին հայերը, ուզեն թե չուզեն, սակայն նախ և առաջ պետք է բացատրեն, թե ինչու՞ և ինչպե՞ս են հայտնվել այդ երկրում: Ու այս գործում միայն հուշարձանները և կամ գուտ քաղաքական գործունեությունը՝ ի դեմս լոբբիստական ձեռնարկումների, միանշանակ բավարար չեն: Անհրաժեշտ են թանգարաններ: Իսկ ցեղասպանությանը նվիրված թանգարանի կազմակերպումը նաև հսկայածավալ կազմակերպչական ու հավաքչական աշխատանք է պահանջում, պետության / համայնքի / «գաղութի» նյութական ու մտավոր ռեսուրսների մոբիլիզացում, այդ թվում՝ թեմայի վերաբերյալ կանխավ կատարված որակյալ հետազոտական աշխատանքի առկայություն, որի վրա և պետք է հիմնված լինի թանգարանի գիտական ցուցադրությունը: Ահա այս իրավիճակի գիտակցումը և դրան ուղղված գործունեության առկայությունը կամ բացակայությունն է, մեր գնահատմամբ, տվյալ երկրի հայ բնակչության «համայնքային» մակարդակի համեմատաբար բարձր կամ ցածր մակարդակ ունենալու ցուցիչ: «Հյուրընկալող» երկրի քաղաքական / տնտեսական / հասարակական / մշակութային կյանքում թույլ ինտեգրվածությունը, հայ բնակչության համեմատաբար փակ կյանքով ապրելն ու գործելը (ինչը, թերևս, համարժեք է «գետտոյականության» երևույթին) համայնքային կազմակերպվածության համեմատաբար ցածր դիրքում գտնվելու իրողության ցուցիչ է<sup>34</sup>: Մինչդեռ XXI դարում «համայնք» հասկացությունը ենթադրում է լիարժեք ինտեգրվածություն տվյալ պետության քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային կյանքում: Օրինակ, ոչ թե լոբբիստական գործունեությամբ աջակցվող կոնգրեսականներ ու սենատորներ, այլ հենց համայնքի օժանդակությամբ տվյալ պետության քաղաքական ղեկավարման համակարգում որոշակի էական դիրք զբաղեցնող հայազգի պաշտոնյաների առկայություն: Եվ քո՝ տվյալ երկրում հայտնվելու յուրատեսակ «էթնոգենեզի» պատմության ներկայացում՝ ի դեմս Ցեղասպանության թանգարան(ների): Հայկական Միյուտքի առանձին «գա-

<sup>34</sup> Որպես անցումային փուլ, հնարավոր է ինտեգրվածության որոշակի մակարդակի առկայություն, սակայն միևնույն ժամանակ օգաղութային մտածողության գերիշխում:

դուրսերի» / համայնքների համար հենց ցեղասպանության լիարժեք գործող, արևմտյան ստանդարտներին համապատասխան թանգարանի առկայությունը կամ բացակայությունն է դառնում այն փորձաքարը, որը ցույց է տալիս տվյալ պետությունում նրա գրաված դիրքի որակը, ինտեգրվածության մակարդակը<sup>35</sup>:

Խուսափելով միանշանակ գնահատականներ տալու պատասխանատվությունից՝ պետք է նկատել, որ, ցավոք, հուշարձանների ու հուշահամալիրների կառուցման գործը շարունակվում է նաև Հյուսիսային Ամերիկայի այնպիսի հայաշատ բնակավայրերում, ինչպես, օրինակ, Բոստոն (բացվել է 2012 թ. մայիսին)<sup>36</sup>, Վանկուվեր (բացվել է 2014 թ. ապրիլին)<sup>37</sup>, Լոուելլ (բացվել է 2014 թ. մայիսին)<sup>38</sup>, Ֆրեզնո (բացվելու է 2015 թ. ապրիլի 24-ին)<sup>39</sup>, Փասսադենա (Լոս Անջելես) (բացվելու է 2015 թ. ապրիլի 24-ին)<sup>40</sup> քաղաքներն են, ուր կենտրոնացած է այսօրվա ամերիկահայության ճնշող մեծամասնությունը: Միաժամանակ ողջունելի է, որ սփյուռքահայության որոշ շրջանակներում (թեև նկատելի ուշացումով) Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը կարճես թե պատճառ կամ առիթ է դարձել գիտակցելու թանգարաններ և ցուցադրություններ ստեղծելու անհրաժեշտությունը և որոշակի քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ<sup>41</sup>: Վաշինգ-

<sup>35</sup> Թանգարան-հուշարձան հարաբերակցության բերված հարցադրումները մասամբ ներկայացվել են նաև 2014 թ. ապրիլին Բլումինգտոնի (կազմակերպիչ՝ Բնդիանայի համալսարան և Հարավային Կոլկասի ամերիկյան հետազոտական ինստիտուտ, գիտաժողով՝ «Կոլկասյան կապեր», զեկուցման թեմա՝ «Հայեր և հրեաներ. հարևաններ հիշողության մեջ») և մայիսին Լոս Անջելեսի (կազմակերպիչ՝ Գալիֆոռնիայի համալսարանի (Լոս Անջելես) Կոտսենի ինստիտուտի հայոց հնագիտության և ազգագրության ծրագիր, գիտաժողով՝ «Հայագիտության արդի պրակտիկաները. նոր գիտելիքի ստեղծումը և տեսանկյունները», զեկուցման թեմա՝ «Հիշողությունը և ինքնությունը ԱՄՆ հայկական համայնքում. հայացք Երևանից») գիտաժողովների ժամանակ:

<sup>36</sup> Հարցի քննարկումը տե՛ս, օրինակ, J. M u r a c h a n i a n. A Monumental Purpose: Armenian Heritage Park <http://asbarez.com/111105/a-monumental-purpose-armenian-heritage-park/>

<sup>37</sup> K. S a g h d e j i a n. An Interview with Designer of Genocide Monument in Vancouver <http://www.armenianweekly.com/2014/05/07/interview-designer-genocide-monument-vancouver/>

<sup>38</sup> S t e ւ T. V a r t a b e d i a n. Lowell Genocide Memorial Gets Rave Notice <http://www.armenianweekly.com/2014/05/26/lowell-genocide-memorial-gets-rave-notice/>

<sup>39</sup> Genocide Monument to Be Built on Fresno State Campus <http://asbarez.com/123105/genocide-monument-to-be-built-on-fresno-state-campus/>, *ի՞նչ Կ'ընթացի* Central Valley Armenian Community to Break Ground on Genocide Monument <http://asbarez.com/127806/central-valley-armenian-community-to-break-ground-on-genocide-monument/>

<sup>40</sup> S t e ւ, օրինակ, Pasadena City Council Unanimously Approves Genocide Memorial Plans, <http://asbarez.com/113690/pasadena-city-council-unanimously-approves-genocide-memorial-plans/>

<sup>41</sup> Հարցի քննադատությունը տե՛ս Հ. Մ ա ս ո լ յ ա ն. Ինչպե՞ս կարող են բարերարները բավարարել Հայաստանի և Միջուրքի բազմաթիվ կարիքները.–

տոնի Ամերիկայի Հայոց ցեղասպանության թանգարանի կազմակերպման պարագայում գործը, թերևս ժամանակավորապես, անհաջողությամբ պսակվեց: 2014 թ. հուլիսին հայտարարվեց, որ Բեյրութի «Թռչնոց բույն» որբանոցի տարածքում կառուցվող Հայոց ցեղասպանությանը և որբերին նվիրված թանգարանի շինարարությունը մոտենում է ավարտին<sup>42</sup>, 2014 թ. հոկտեմբերին հանրությանը տեղյակ պահվեց Գլենդեյլ (Լոս Անջելես) քաղաքում ամերիկահայության թանգարան և մշակութային կենտրոն բացելու պլանների մասին<sup>43</sup>, թանգարանի ստեղծման գործընթացը (նախագիծը կոչվում է «Մեր-2015») շարունակվում է Փարիզում<sup>44</sup>: 2013 թ. հուլիսին հայտարարվեց Մոնտեվիդեոյում Հայոց ցեղասպանության թանգարան հիմնադրելու մասին<sup>45</sup>, իսկ 2014 թ. հունիսին Բուենոս Այրեսի քաղաքապետարանը որոշեց տարածք տրամադրել Հայոց ցեղասպանության թանգարանի ստեղծման համար<sup>46</sup>, մեկ ամիս անց արդեն կայացավ թանգարանի հիմնարկեքը ՀՀ Նախագահի մասնակցությամբ<sup>47</sup>:

Հուսանք, որ ստեղծվելիք թանգարանները կունենան ոչ միայն ցուցադրական տարածքներ, այլ նաև կլինեն գիտահետազոտական կենտրոններ: Այդ ի-

<http://www.tert.am/am/news/2014/01/22/sassounian/>: Հոդվածագիրը, հղելով Փիթեր Բալաքյանին, հանգամանորեն քննարկում է այն իրողությունը, որ Չիկագոյի հայությանը չհաջողվեց հավաքել շուրջ 600 հազ. դոլար Ինվոյսի Հուլքոստի թանգարանում 2015 թ. կազմակերպվելիք Երևանի լեռան ստվերը. Հայոց ցեղասպանությունը անունը կրող ժամանակավոր ցուցահանդեսի ֆինանսավորման համար: Ի մասնավորի նա նկատում է, որ ա) հայ բարերարների մեծ մասը նախընտրում է իր ավանդը ներդնել և անունը կապել շոշափելի ծրագրերի հետ, ինչպիսին եկեղեցիներն ու դպրոցներն են, այլ ոչ թե վերացական ձեռնարկներում, ինչպիսին հանրային կապերն ու արվեստն են, բ) չկան հաստատված մեխանիզմներ համայնքի կարիքների առաջնահերթության սահմանման և ըստ արժանվույն գնահատման համար, գ) երբեմն ծրագրերը ֆինանսավորվում են ոչ թե ըստ իրենց արժանիքների, այլ նվիրատուի ու ստացողի միջև անձնական հարաբերությունների հիման վրա, դ) թեև հայերը բավական առատաձեռն են իրենց համայնքի կազմակերպություններին աջակցելու գործում, սակայն խնդրանքները հաճախ գերազանցում են առկա դրամական միջոցները և այլն:

<sup>42</sup> Բեյրութում կառուցվող Հայոց ցեղասպանությանը և որբերին նվիրված թանգարանի շինարարությունը մոտենում է ավարտին <http://www.tert.am/am/news/2014/08/01/beyrut/>:

<sup>43</sup> Centennial Committee Begins Process for Building Museum in Calif. <http://asbarez.com/127737/centennial-committee-begins-process-for-building-museum-in-calif/>:

<sup>44</sup> Մանրամասն տե՛ս. Հոլանդը խոստացել է Փարիզում հիմնել Հայոց ցեղասպանության թանգարան <http://www.panorama.am/am/society/2012/03/14/hollande/>: Տե՛ս նաև՝ Ֆրանսիայում ծրագրվում է հայոց ցեղասպանության հուշահամալիր ստեղծել. – «Լուսաբաց Loussapatz The Dawn», 9. III. 2013, թիվ 974, էջ 7–8:

<sup>45</sup> Մոնտեվիդեոյում կհիմնադրվի Հայոց ցեղասպանության թանգարան <http://www.panorama.am/am/society/2013/07/20/genocide-museum/>:

<sup>46</sup> City of Buenos Aires Allocates Property for Genocide Museum <http://asbarez.com/123993/city-of-buenos-aires-allocates-property-for-genocide-museum/>

<sup>47</sup> Թանգարանի հիմնարկեք. – «Ժամանակ» (Մտամբուլ), 9. VII. 2014:

մաստով, թերևս, սխալված չենք լինի, եթե նկատենք, որ ուղղակի կապ գոյություն ունի հրեաների Հոլոքոստին նվիրված հետազոտությունների, գիտահետազոտական կենտրոնների<sup>48</sup> հսկայական թվի և հիշողության պահպանման ու փոխանցման այլ միջոցների (հուշարձան, հուշահամալիր, թանգարան) քանակի միջև: Դժվար է միայն պնդելը, թե ո՞րն է առաջնայինը: Այդ կապը, թերևս, ավելի է ամրապնդվում նաև կրթական համակարգի միջոցով, երբ Հոլոքոստի դասավանդումը վաղուց իր հաստատուն տեղն ունի եվրոպական ու ամերիկյան կրթական հաստատությունների դպրոցական ծրագրերում<sup>49</sup>, և այդ աշխարհագրությունն անընդհատ ընդլայնվելու միտումներ է ցույց տալիս<sup>50</sup>:

\* \* \*

Այսպիսով, Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարաններն իրենց թվաքանակով էապես զիջում են հրեաների Հոլոքոստին նվիրված թանգարաններին մի քանի պատճառներով: Աշխարհագրորեն Հայոց ցեղասպանությունն իրականացվեց Օսմանյան կայսրության տարածքում, որի իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունը ոչ միայն չի ճանաչում Ցեղասպանության իրողությունը, այլև պետականորեն ժխտում է այն: Հոլոքոստին նվիրված թանգարանների կեսը գտնվում է Եվրոպայի տարածքում, և հրեաների զանգվածային ոչնչացման գործը գլխավորող Գերմանիան պաշտոնապես ճանաչել է իր մեղքը: Այն եվրոպական պետությունները, որոնց տարածքում ինչ-ինչ ձևերով տեղ է գտել Հոլոքոստը, նույնպես ընդունում են իրողությունը, այն մաս է կազմում եվրոպական կրթական և ընդհանրապես արժեքային համարկարգի ու լայնորեն ներկայացված է թանգարանային ցուցադրություններում: Հրեաների Հոլոքոստի դեպքում մեծ ուշադրություն է հատկացվում երևույթի գաղափարախոսական բաղադրիչին, երբ ցեղասպանությունը բնութագրվում է իբրև հանցագործություն մարդկայնության դեմ, ընդհանրապես մարդատյաց գաղափարախոսության կենսագործման, ժողովրդավարական արժեքների ու,

<sup>48</sup> *Դրանց մասին տե՛ս, օրինակ*, Association of Holocaust Organizations: Directory. Edited by Dr. William L. Shulman. Published by Holocaust Museum Houston. Houston, Texas. 2008.

<sup>49</sup> *Հարցի շուրջ մանրամասն տե՛ս* “Task Force for International Cooperation on Holocaust Education, Remembrance and Research” *ցանցի նյութերում*՝ <http://www.holocausttaskforce.org/index.php>: *Տե՛ս նաև Հ. Մարտիսի* Հոլոքոստի մասին տեղեկատվության առկայությունը Հայաստանի դպրոցական դասագրքերում. – «Հայ ժողովրդական մշակույթ» XVII. *Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի*, Երևան, 2013, էջ 358–364:

<sup>50</sup> *Տե՛ս, օրինակ*, Learning from the Past: Global Perspectives on Holocaust Education. Salzburg Global Seminar, June 27 – July 1, 2012; Why Teach about Genocide? The Example of the Holocaust. [http://www.unesco.org/new/en/education/resources/online-materials/single-view/news/why\\_teach\\_about\\_genocide\\_the\\_example\\_of\\_the\\_holocaust/#.UvzVsmJfr4Y](http://www.unesco.org/new/en/education/resources/online-materials/single-view/news/why_teach_about_genocide_the_example_of_the_holocaust/#.UvzVsmJfr4Y): Վերջին քննարկման առիթով հարցի մանրամասնեցումը տես, *օրինակ*, ենթասահարյան Աֆրիկայի 14 պետությունների կրթության նախարարությունների 2012 թ. սեպտեմբերյան հանդիպման ավարտին ընդունված հետևյալ փաստաթղթում <http://www.state.gov/documents/organization/200829.pdf> :

մասնավորապես, մարդու իրավունքների զանգվածային ոտնահարման, ռասիզմի դրսևորում: Նման մեկնաբանումների շեշտադրումը նշանակալիորեն հանում է երևույթը էթնիկական հիշողության սահմաններից և տեղափոխում համամարդկային հարթություն: Հայոց ցեղասպանության դեպքում, պայմանավորված թուրքական ժխտողականությամբ և հայոց ողբերգությունը «մոռացված ցեղասպանություն» լինելու հանգամանքով, տասնամյակներ շարունակ խնդիր էր դրվում ապացուցել ցեղասպանության իրողությունը: Նման հարցադրումը ականա հանգեցնում էր Հայոց ցեղասպանության շեշտադրմանը որպես գուտ ազգային ողբերգություն, ինչը չէր նպաստում նրա՝ որպես համամարդկային աղետ, ընկալմանը ու, համապատասխանաբար, թանգարանային ցուցադրություններում բավարար ներկայացմանը: Հայոց դեպքում ցեղասպանության գոհերի հուշարձանների կառուցմանն առավելություն տալը գուցե թե ինչ-որ չափով պայմանավորված է նաև սփյուռքահայության համայնքային կազմակերպվածության, տվյալ պետության քաղաքական / տնտեսական / հասարակական / մշակութային կյանքում ինտեգրվածության մակարդակի գործոնով:

МУЗЕЙ И ПАМЯТНИК  
(СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ АРМЯНСКОГО  
И ЕВРЕЙСКОГО ОПЫТА)

АРУТЮН МАРУТЯН

Р е з ю м е

Существует ряд факторов, объясняющих различия в подходах к сохранению памяти о Геноциде армян и о еврейском Холокосте, а также в способах представления этих явлений. В первом случае предпочтение отдается возведению памятников, во втором – строительству музеев. Геноцид армян был осуществлен на территории Османской империи, правопреемница которой – Республика Турция, не только не признает факт Геноцида, но и отрицает его на государственном уровне. Половина музеев Холокоста находится на территории Европы. Германия, руководившая делом уничтожения евреев, официально признала свою вину перед ними и их потомками. Те европейские страны, на территории которых тем или иным образом осуществлялся Холокост, также признают свою вину. Холокост включен в школьную программу европейского образования, стал частью европейской системы ценностей и широко представлен в музейных экспозициях. В случае Холокоста большое внимание уделяется идеологической составляющей этого явления: оно характеризуется как преступление перед человечеством, проявление антигуманной идеологии, попрание демократических ценностей, в частности, массовое попрание прав человека, проявление расизма. Акцентирование подобных оценок в значительной степени выносит проблему за рамки этнической памяти и переводит в общечеловеческую плоскость. Что касается Геноцида армян, то здесь на протяже-

нии десятилетий ставилась задача *доказать* факт Геноцида, что было обусловлено турецкой политикой отрицания и тем обстоятельством, что эта трагедия долгое время считалась «забытым геноцидом». Такой подход невольно приводил к пониманию Геноцида армян как сугубо национальной трагедии, что не способствовало восприятию его как общечеловеческого бедствия и, соответственно, достаточному представлению в музейных экспозициях. Предпочтение возведению памятников, наблюдаемое среди армянской диаспоры, вероятно, было обусловлено уровнем организованности конкретной армянской общины, степенью ее интегрированности в политической, экономической, общественной, культурной жизни государства, в котором она проживала.

MUSEUM AND MONUMENT  
(COMPARATIVE ANALYSIS OF ARMENIAN AND JEWISH  
EXPERIENCE)

HARUTYUN MARUTYAN

S u m m a r y

A number of reasons explain the disparity in memory preservation and communication between the Holocaust and the Armenian Genocide, where the former's is mainly conveyed through museums and the latter's through monuments. Geographically the Genocide was perpetrated in the territory of the Ottoman Empire, and its successor the Republic of Turkey not only doesn't recognize the fact, but denies it officially. Half of all the Holocaust museums are currently in the territory of Europe, and Germany – the prime actor in the organization of mass killings of Jews – has officially recognized its guilt towards individual victims and their descendants. Other European states, whose territories have been one way or another engaged in the Holocaust, also admit this reality. It is a part of their educational and value systems, and is widely exhibited in museums. In this case the emphasis is on the ideology of the phenomenon, i.e. that it has been a manifestation of racism, of violation of democracy and of human rights in particular, a manifestation of an inhumane ideology. Interpretations with such an emphasis move the phenomenon from the boundaries of ethnic memory and onto a global level. In the case of the Armenian Genocide, conditioned by Turkey's negation and by the fact that the Armenian tragedy was 'a forgotten genocide,' for decades scholars have been engaged in *proving* the fact of the genocide. Such an approach has unintentionally led to emphasizing the Genocide as only an ethnic tragedy, which has not helped to its being perceived as a global calamity, and naturally, to being properly exhibited in museums. In the case of the Armenians, giving preference to the construction of monuments to the Genocide martyrs may be to some extent conditioned by their protracted transformation into full-fledged Diaspora communities.